ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Ե.–ԺԵ. ԴԱՐ

Ներսէս Շնորհալին իբրեւ յառաջադէմ երաժիշտ մեծագոյն տեղը պէտք է գրաւի ոչ միայն մեր երաժշտութեան պատմութեան մէջ, այլ նաեւ ամբողջ համաշխարհային երաժշտութեան պատմութեան մէջ։ Մինչեւ այսօր էլ մեծահանճար երաժիշտը մնացել է չգնահատուած եւ չհասկացուած, ինչպէս մի ժամանակ էին Բախն ու Բեթհովէնը։ Դա մեր ժողովրդի անպարծենկոտ, ունեցածը պրոպականտել չգիտցող բնութիւնից է։ Շնորհալին էր որ առաջին անգամ յաջողեցաւ քանդել այն պարիսպներն ու արգելքները, որոնք խոչընդոտ էին հանդիսանում երաժշտութեան զարգացման եւ յառաջացման։ Նա, առաջին անգամ, հոգեւոր երաժշտութեան սահմանափակուած սահմանները բացեց ժողովրդական մոտիւներով եւ բառապաշարով, եւ հնարաւորութիւն տուեց նրան զարգանալու, յառաջդիմելու։

Շնորհալու յօրինած երգերը ընդհանրապէս ժողովրդական աշխոյժ եւ կենդանի ռիթմ ունեն եւ ազգային հարազատ ոգով են գրուած։

Շնորհալին ոչ միայն ժողովրդական եղանակներին յարմարեցնում էր կրօնական բառեր, այլ նաեւ եկեղեցական բառերը յարմարեցնում էր աշխարհիկ, ժողովրդական եղանակներին։ Հայաստանում այս մեծ յեղաշրջումը կատարւում էր Շնորհալու, մեր հոգեւոր գերագոյն պետի ձեռքով եւ առաջնորդութեամբ. մինչդեռ Եւրոպայում այս շարժումը սկսուեց ԺԶ. Դարում միայն, մեզնից չորս դար վերջ, այն էլ մի պարզ կրօնաւորի՝ Հայնրիխ Իսահակի եւ ապա Պալեստրինայի ձեռքով։ Հայաստանում ԺԲ. Դարից սկսւում է այն շարժումը, որ ԺԶ. Դարում Եւրոպայում պիտի ի յայտ գար որպէս Վերածնունդ (Ռընեսանս)։

Շնորհալին միաժամանակ, ժողովրդական եղանակների ռիթմից օգտուելու հետ, շարականների եւ երգերի բառերը յօրինելիս՝ դիմում էր ժողովրդական տաղաչափութեան։ Օրինակ՝

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա։

Այսքան պարզ, սահուն եւ շատ դիւրահասկնալի լեզուով է գրուած իր շարականների մեծ մասը, եւ անմիջապէս նկատւում է իր եւ նախորդների միջեւ ունեցած ոճական մեծ տարբերութիւնը։ Սրանով՝ Շնորհալին մի նպատակ է հետապնդել. արուեստը ժողովրդականացնել եւ մանաւանդ եկեղեցում երգուած շարականներն ու երգերը մատչելի դարձնել պարզ, հասարակ ժողովրդին։

Հետաքրքիր է Շնորհալու «Յիշեսցուք ի գիշերի» երգի յօրինման դրդապատճառը։

Պատմւում է թէ Հռոմկլայի պահակները գիշերները երգում էին սիրային երգեր եւ Շնորհալուն շրջապատող օդը ապականում վայնասուններով։ Շնորհալին արդէն ջերմից անհանգիստ, երբ լսում է գիշերային պահակների անճոռնի երգերը՝ էլ աւելի է անհանգստանում։ Այդ բարեհոգի եւ երաժիշտ անձը չէր կարող տանել նման անշնորհք երգերն ու եղանակները, մանաւանդ գիշերային անդորրութեան մէջ՝ «երբ մարդիկ իրենց ստեղծողին միայն պէտք է փառաբանեն»։ Ուստի գրում է նշանաւոր «Յիշեսցուք» եւ «Զարթիր փառք իմ» երգերը։ «Վասն այնորիկ արար նա երգս եւ ուսոյց այնոցիկ որ պահէին զբերդն, զի փոխանակ վայրապար ձայնիցն, զայն ասասցեն որոյ սկիզբն է Սաղմոս Դաւթի «Յիշեսցի ի գիշերի զանուն քո, Տէր» եւ այսպէս խորհրդաբար ըստ կարգի «Զարթիք փառք իմ» որ

digitised by A.R.A.R.@

այժմ ասի ի ժամ պիշերային պաշտաման» (Կ. Գանձակեցի)։

Շնորհալին առանձնայատուկ տեղ է գրաւում նաեւ խազերի պատմութեան մէջ։ Նրան են վերագրում շարականների վրայ գործածուած պարզախազերից եւ նրանդախազերից շատերը։ Միջին դարերում, մանաւանդ Շնորհալու շրջանին, խազերը այնքան են բազմացել՝ որ այժմ դժուարանում ենք որոշել թէ դրանցից որո՞նք են հիմնական խազերը, եւ որոնք՝ երկրորդական խազերը։

Շնորհալին մեծ է նաեւ նրանո՛վ, որ իր բանաստեղծութիւններում եւ երգերում լայնօրէն օգտագործել է տաղաչափական նոր կերպեր, արտայայտութեան պարզ ձեւեր եւ ձայնաշարերի տեսակներ։ Աբեղեանն էլ ասում է, որ «Շնորհալու տաղերի մէջ կան չափեր՝ որոնք ուրիշ տեղ չենք գտնում, դրանք կապուած են եղել եղանակի հետ»։

Շնորհալին ԺԲ. Դարի մեր մեծագոյն հայրապետն է։

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՕՆԵՑԻ

Մեծանուն երաժիշտ, գերահռչակ վանահայր Հաղարծնի վանքի, մեծ բարեկարգիչ երաժշտական խազերի, մեր եկեղեցական երաժշտութեան ամենացայտուն դէմքը ԺԳ. Դարում։

Խաչատուր Տարօնեցու մասին կենսագրական տեղեկութիւններ չկան։ Ինչ որ կայ, զանազան հեղինակների ու պատմիչների յիշատակութիւններից է։ Կիրակոս Գանձակեցին վկայում է որ 1191 թուականին, երբ Մխիթար Գոշը կատարում էր Գետիկ վանքի բացման հանդէսը, ի թիւս ժամանակին յայտնի վանքերի եւ դպրեվանքերի առաջնորդների՝ կար նաեւ Հաղարծնի գերահռչակ վանահայր երաժիշտ Խաչատուր Տարօնեցին։ Եթէ ընդունենք որ այդ շրջանում նա կը լինէր 25-30 տարեկան, ապա ծնուած պէտք է լինի 1160-1165 թուականներին։

1240 թուականին Կիլիկիոյ Կոստանդին կաթողիկոսը սահմանում է 23 գլուխ կանոններ եւ դրանք ուղարկում Արեւելեան Հայաստան՝ Վարդան Արեւելցու միջոցով.

Արեւելեան վարդապետները քննում են այդ եւ ընդունում. նրանց թւում էր նաեւ Խաչատուր վարդապետ Տարօնեցին։ Ուրեմն նա 1240 թուականին տակաւին ողջ էր։

Հաղարծին վանքը ԺԳ. Դարում Խաչատուր վարդապետի ժամանակ, Հայ երաժշտութեան մեծագոյն օճախն էր։ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Խաչատուր Տարօնեցի այր առաքինի եւ գիտութեամբ հռչակեալ մանաւանդ երաժշտական արհեստի։ Սա պայծառացոյց զուխտն որում առաջնորդ էր ինքն»։

Տարօնեցին աւելի յայտնի է երաժշտութեան բնագաւառում, որովհետեւ նրան են վերագրում խազերի ներդրումը մեր եկեղեցական երաժշտութեան մէջ։ «Սա եբեր ըղխազսն ի կողմանս յարեւելից զանմարմին եղանակսն ի մարմին ածէր... Սա եկեալ գրեաց եւ ուսոյց բազմաց» (Կ. Գանձակեցի)։

Սակայն այս հարցը այժմ լուծուած է, որովհետեւ գտնուած են ձեռագիր խազեր, որոնք Տարօնեցուց շատ առաջ գոյութիւն ունէին, ինչպէս խօսել ենք սոյն ուսումնասիրութեան առաջին մասում։

Գանձակեցու վկայութիւնը Տարօնեցու մասին, անշուշտ անվստահելի չէ, սակայն այն պէտք է ճիշդ հասկանալ։ Նա ասում է որ «սա եբեր»։ Տարօնեցին խազերը բերեց եւ ոչ թէ ստեղծեց. ուրեմն խազերը գոյութիւն ունէին որ նա էլ «բերեց»։ Այս յիշատակութիւնը կարելի է այսպէս բացատրել. Նա էր որ առաջին անգամ խազերը Արեւելքից բերեց, նորոգեց եւ տարածեց Արեւելեան Հայաստանում։ Որովհետեւ, ըստ երեւոյթին, քաղաքական վատ պայմանների բերումով Արեւելեան Հայաստանում խափանուած է եղել խազերի գործածութիւնը. եւ քանի որ այս ժամանակաշրջանում Արեւմուտքում հաստատուել էր Կիլիկեան Հայոց թագաւորութիւնն ու Կաթողիկոսութիւնը, ուստի եւ հայկական կրօնական օճախները փոխադրուած էին Կիլիկիա, մինչ Արեւելքում վանքերն ամայացել էին։ Դրա արդիւնքն այն էր որ գրականութիւնն ու արուեստը դադարել էին բարգաւաճելուց եւ

digitised by A.R.A.R.@

նոյնիսկ եկեղեցական խաղերը գործածութիւնից ընկել էին: Մինչ այս պատճառով Տարօնեցին բերեց խաղերը, ձայնագրեց ու խմբագրեց բազմաթիւ շարականներ, բաց ուում նաեւ Արեւմտեան վարդապետների (Շնորհալի եւ ուրիշներ) նոր ստեղծագործած շարականները:

Տարօնեցին Հաղարծնի վանքում աւանդում էր ոչ միայն երաժշտութիւն, այլ նաեւ փիլիսոփայութիւն եւ արտաքին գիտութիւններ. այսուամենայնիւ Հաղարծնի վանքը մեր մատենագրութեան մէջ յայտնի է որպէս երաժշտութեան օրրան:

Տարօնեցուն է վերագրւում մեր սքանչելի «Խորհուրդ Խորին»ը, որի սկզբնատառերը կազմում են իր անունը: Ըստ աւանդութեան, նա առաջին անգամ այն շարականը երգել է Զաքարէ իշխանի օրով՝ Հաղբատում:

Ձեռագրերում պահուել են բազմաթիւ տաղեր, գանձեր Տարօնեցու անունով. սակայն նրանք կարող են նաեւ պատկանել Խաչատուր Կեչառեցուն, որովհետեւ այս վերջինն էլ անուանի մեծ երաժիշտ է եղել:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ

Յովհաննէս Սարկաւագի ծննդեան թուականը յայտնի չէ, հաւանաբար ծնուել է 1045-1050 թուերին Արցախի Բարսոս գիւղում, քահանայի ընտանիքում: Նրա հայրն ու մայրը քահանայական սերնդից են եղել: Յովհաննէս Սարկաւագը իր դաստիարակութիւնն ստացել է Հաղբատում, իր քեռու՝ Ուրճացի վարդապետի ձեռքի տակ. «Սնեալ եւ դաստիարակեալ առ սրբասնունդ քեռոյն իւրոյ՝ Ուրճացի վարդապետի ի վանս Հաղբատայ»: Դրա համար էլ կոչուել է նաեւ Հաղբատեցի:

Մանուկ հասակում տեղափոխւում է Անի, որը եղել է իր «ծննդեան» քաղաքը: Կոչուել է նաեւ Անեցի: Նրա օրով Անին ունէր փառաւոր միջնակարգ դպրոցներ. ուրեմն Յովհաննէս Սարկաւագ իր կրթութեան մի մասը առել է Անիում, իսկ կատարելագործուել Հաղբատում (Նա իր կեանքի վերջին օրերը անցկացրել է Հաղբատում, որպէս վանահայր, եւ այնտեղ էլ վախճանուել 1129 թուականին ալեւոր հասակում: Իր գերեզմանաքարի վրայ գրուած է.

«Արձանս այս նշանակաց է
Սոփեստոսին Սարկաւագի»):

Յովհաննէս Սարկաւագի առաջին ուսուցիչները եղել են իր երկու քահանայ պապերը, հայրը եւ Ուրճացի վարդապետը: Նա իր մանկութեան հասակում մեծ սէր է ունեցել դէպի երաժշտութիւնը: Ուսման հետագայ երկար տարիներում նրա մէջ հանդէս են գալիս գիտութեան, փիլիսոփայութեան, մաթեմաթիկայի եւ արուեստների արտակարգ ընդունակութիւններ:

Յովհաննէս իր տարեկիցների մէջ աչքի է ընկել իր արտակարգ ուշիմութեամբն եւ ընթերցասիրութեամբ: Գանձակեցին պատմում է որ նա մի ամբողջ շաբաթ բանտարկուած մնացել է Հաղբատի մատենադարանում՝ ընթերցանութեամբ պարապելով. «Այս է իմ կերակուր եւ ըմպելի, զոր կերայ եւ արբի զաւուրս այսուիկ»:

Յովհաննէս Սարկաւագը Հայ Միջնադարի ամենապայծառ դէմքն է. հանճարեղ գիտնական, բանաստեղծ, երաժիշտ, մանկավարժ, փիլիսոփայ, տոմարագէտ, քերականագէտ եւ հեզաբարոյ կրօնական: Նա Հաղբատի վանքի «սիւն»երից մէկն է եղել եւ հասցրել բազմաթիւ աշակերտներ: Նրա աշակերտներից են եղել Երեմիա Անձրեւիկը, Խաչատուր, Սարգիս Կունտր, Ստեփանոս Զոզոմանը, Գրիգորը, Յովհաննէս եւ Սամուէլ Անեցիները: Գանձակեցին, որ Սարկաւագից մի դար յետոյ է ապրել, նրա հռչակի մասին գրում է. «Մեծիմաստն գիտութեամբ քան զհոլովս եւ զհանճարեղն յամենայնի մտահարուստ Յովհաննէս Սարկաւագ, մեծ հռետոր եւ իմաստասէր»:

Նա կոչուել է նաեւ «մեծ սոփեստոս», այսինքն՝ գիտուն փիլիսոփայ: Արդարեւ, նա իր ժամանակի ամենախոշոր մաթեմաթիկոսն ու փիլիսոփան էր: Հակառակ նրան, նա համեստութեամբ ինքն իր մասին ասում է «կիսակատար իմաստակ»:

Յովհաննէս Սարկաւագի գրական երկերը

digitised by A.R.A.R.@

բազմաթիւ են. «Հայոց Պատմութիւն», որը կորել է եւ որի մասին միայն ակնարկութիւններ կան: «Եկեղեցական Պատմութիւն», որը նոյնպէս կորել է եւ որից միայն մի հատուած է հասել մեզ: «Հակաճառութիւն ընդդէմ անդիտաց»: «Ընդդէմ երկաբնակաց»: «Մեկնութիւն տօմարի եւ յաղագս անկիւնաւոր թուոց» մի շատ կարեւոր աշխատութիւն: «Պատճէն Տօմարի»: «Մեկնութիւն տօմարիցն հայկազեանց»: Նմանապէս ներբողներ, մեկնութիւններ, ճառեր, տաղեր, շարականներ եւայլն:

Նա յօրինել է Ղեւոնդեան «Պայծառացման մանկունք»ը, որը երգւում է եկեղեցում: 1941 թուականին Նորայր Եպս. Պօղարեան Երուսաղէմի Ձեռագրաց Մատենադարանում գտաւ Յովհաննէս Սարկաւագի այբենական կարգով գրուած մի շատ գեղեցիկ շարականը, Ս. Ղեւոնդեանց յիշատակին:

Յովհաննէս Սարկաւագ Վարդապետ իր գրական, մանկավարժական եւ հոգեւոր գործունէութեամբ մնում է մեր գրականութեան մշտավառ աստղերից մէկը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ ՊԼՈՒԶ

Յովհաննէս Պլուզ (Պլուզ նշանակում է կապուտաչուի) ԺԳ. Դարի մեր նշանաւոր մեծ վարդապետներից է: Նա ծնուել է շուրջ 1250 թուականին Երզնկա քաղաքում, ուստի կոչուել է Երզնկացի: Նա ինքն իր համար գրել է. «Նուաստ եւ տկարոգի Յովհաննէս Երզնկացի սպասաւոր բանի»: Նա ուսումն առել է Սեպուհ լերան Ս. Մինաս վանքում, բայց այնտեղի ուսումով չի բաւականացել: Նա մօտիկ վանքերն էլ այցելելուց յետոյ անցնում է հիւսիս-արեւելեան Հայաստան, եւ աշակերտում համբաւաւոր Վարդան Արեւելցի վարդապետին՝ Կայենձորում: Նա 1274 թուականին վերադառնում է Երզնկա եւ տասը տարի յետոյ գնում է Կիլիկիա, ուր իբրեւ մեծ հեղինակութեան տէր վարդապետ լաւ ընդունելութիւն է գտնում ժամանակի կաթողիկոսից եւ թագաւորից: 1284 թուականին գտնւում է Տփղիս քաղաքում: ԺԳ. Դարի վերջերին նա հաստատւում է Արտազու Ս. Աստուածածին կամ Թադէոս Առաքեալի վանքում, Ծործոր գիւղի մօտ, որի հետեւանքով կոչուել է նաեւ Ծործորեցի: Սակայն այս կարծիքին հակառակորդներ էլ կան, որոնք ասում են որ Յովհաննէս Պլուզը եւ Յովհաննէս Ծործորեցին տարբեր անձեր են:

Հայր Ղ. Ալիշան Երզնկացուն կոչել է նաեւ Մաշածին եւ Քաղցրիկ:

1316 թուականին նա մի անգամ էլ ճանապարհորդում է Կիլիկիա: Վերադառնալով Արտազու վանքը, այնտեղ մնում է մինչեւ իր կեանքի վերջը: Մահուան ճիշդ թուականը յայտնի չէ, պէտք է մօտ 1326 թուականին վախճանած լինի:

Յովհաննէս Պլուզը եղել է ԺԳ. Դարի խոշոր մատենագիր, իմաստասէր, քերականագէտ, տոմարագէտ, ճարտասան, թարգմանիչ, բանաստեղծ, գրիչ, մանկավարժ եւ նշանաւոր շարականագիր եւ երաժիշտ:

Նրա ստեղծագործական երկերը բազմաթիւ են. «Կանոնք եւ սահմանք միաբանութեան եղբարց»: «Մեկնութիւն Դիոնիսիոս Թրակացու քերականութեան»: «Յաղագս երկնային շարժման»:

Յովհաննէս Երզնկացուց մնում են բազմաթիւ եւ բազմազան բովանդակութեամբ երկեր, ճառեր, մի ներբող՝ «Ներբող ի սուրբ Լուսաւորիչն», մեկնութիւններ, խրատական երկեր, տաղեր, իմաստական ասքեր, «Երգ Պլուզ վարդապետի ասացեալ»: Ձայնքաղ շարականոցում նրան են վերագրւում հետեւեալ շարականները. «Յովհաննէս վարդապետն Պլուզ՝ զսրբոյն Ներսէսի», «Որ վլոյս անճառ», «Այսօր զուարճացեալ», «Լերինք ամենայն», «Սուրբ Լուսաւորչին» եւ «Յաւուր վերջինն»:

ԶՕՀՐԱՊ ՍՐԿ. ՇԱՄԼԵԱՆ

ՎԵՐՋ

digitised by A.R.A.R.@